գութենէ կայսերութեան, թոյլ ետուն պաշտօնն կայսերութեան մատանի՛ի շարն ժառանգութեան, սովաւ եմուտ մէջ լուսոյն սոցայ խաւար մի մեծ, և մէջ բարութեանց սոցայ չար, և մէջ միաբանութեանց սոցայ բեկումն, և մէջ համահաւասարութեանց սոցայ քարընկէց դար և փոս այսինքն մեծ և փոքր, յայնժամ սկսեաց մինն փառաւորիւր ՝ի կարգէն կայսերութենէ, միւսն ՝ի աստիճանէ ծերակուտութենէ և այլն, մինչ զուգեցին համահաւասար միաբանութիւնս իւրեանց, բացին փականս Օրինաց որում փակեալ կայր ՝ի հիմանէ, և արգելէր բնական ցանկութիւնս իւրաքանչիւր սրտից յատկապէս անձանց, և թոյլ ետուն զի բնութիւն կայսեր ջանասցէ ՝ի կամս իւր մինչ սովաւ եմուտ ամբարշտութիւն ՝ի մէջ իւրեանց այնքան որ մինչև մի ՝ի կայսերաց նոցայ որում անուանէր Ներօն, ինքնակամ հրամանաւ իւրով եբաց յորովայնն մօրն և ծնօղին իւրոյ, զի տեսցէ տեղի բնակութեան իւրոյ ՝ի ժամանակի երեխայութեան իւրոյ, զի նովաւ եղև վախճան կենաց մօրն Ներօնի կայսերն հռոմէացւոց. ուրեմն տես զանազանութիւն ժամանակին և բանին և գործոյն որ մինչ դեռ այս հռոմէացիք ըստ Օրինօք կախեալ կային՝ ոչ ոք իշխէր ՝ի խոշորդիմօք նայիլ ՝ի յերեսս կնոջ թող գնակառակիլ, յանդիմանալ նեղել և այլն նմայ, և եթէ գուցէ գտանիւր ոմն ոք խստասրտութեամբ